լատինք և յոյնք։ Միրոյ և խաղաղութեան նշան մը ցոյց կ՚ուզէին տալ պաշտօնապէս՝ Գաղղիոյ դեսպանին թելադրութեամբ։

Ղամակս կը ներկայացնէ հուսկ պատառիկ մը Օսմանեան պատմութենէն. հոն միջնորդութիւն կատարողն է Գերմանացւոց թագման դեսպանը։

. . . Գրիգոր Երուսաղէմայ պատրիարգն արար զՍիւնհադոս յեկեղեցւոջ աստուածածնայ կոչեալ զամենայն եկեղեցպանս՝ զգլխաւորս էսնաֆից՝ և զառաջիկայ քահանայս՝ առ յորս ասացեալ է, թէ ես և յօհաննէս վարդապետն այսքան ժամանակ է, զի եղաք ձեզ առաջնորդք. ես յերուսաղէմ վճարեցի 800 քսակ պարտս սուրբ յակոբայ. և յօհաննէս վարդապետն չինեաց զայնքան եկեղեցիս յետ այրմանց նոցին, և եկեղեցեաց զբազումս պակասութիւնս լցոյց, և զառաջնորդութիւնս արար. իսկ դուք, լուայ, զի ոչ իցէք կամեցեալ այժմ զյօհաննէս վարդապետն ձեզ առաջնորդ լինել։ Ցեսէք որդեակք իմ, զի ես ոչ թողում զնա միայնակ, զի ուր է նա և ես անդ. և ուր նա և ես անդ[1], զի նա է իմ որդի, և ես նորա հայր ըստ աստուածարութեան վանահայրին մերոյ, որ էր ուսուցիչ մեր։ Վասն որոյ եթէ ոչ կամիք զնա, ինձ և նմա տուք զհրաման, զի երթիցեմք հանդերձ փոքրաւորօք մերովք յերկիրն մեր և ի մենաստանի մերում վճարիցուք զկեանն մեր։ Եւ լուեալք զբանս զայս ժողովրդեան զկական բարձեալք՝ ասացեալք են, թէ մեք բաց ի ձէնջ զառաջնորդ ոք ոչ կամիմք։ Եւ նորա պատասխանեալ այսպէս, թէ որովհետև այնպէս է, ուրեմն ամենեքինդ կնքեցէք կնքով ձերովք զթուղթ մի, որպէս զի զայն թուղթն յղեսցուք ի յօրտուն գրեցեալ այնր թղթին, և ի ձեռին մերում գտանիցի. որպէս զի և մեք ապահով եղանիցիմք ի յառաջնորդելն և կացուցեալ եղիցի ի մէնջ չորս անձինք իմաստունք առ իւրաքանչիւր եկեղեցիս, որպէս զի նոքա զայնպիսիս անձինս ըմբռնեալք տարցեն առ դատաւորս. և եղիցին նոքա պատժեցեալք ի նոցունց..։ Դարձեալ՝ աւագ չաբթի զիշերն եղև մեծահռչակ ելումն թափօրից ի զալաթեայ։ Եկին բազումք հրեշտակք, այսինքն ֆռանգզզու, լէհին, և ինկիլիզու հին էլչին. բայց հրեշտակն ֆռանգզզու, որ է մեր նախախնամիչ եկեալ հանդերձ մատամայիսն ի գեմերա[լ]գրն՝ նստեալ ի տան գեմբրին՝ հրամայեաց՝ նախ հայք լուսաւորչայ ժամուն ելանել ի թափօր. ապայ լաթինք և յեռոյ յոյնք, և այնպէս եղև։ Բայց յոյնք յիմարեցան վասն հայոց, զի տրեցաւ նոցա այնպիսի պատիւ։ Եւ այնքան բազմութիւնք արանց և կանանց գոյին հայոց ուղղափառաց և արտուղեաց ի ճանապարհս և ի տունս ընդ որովք անցաւ թափօրն, մինչ զի գրէթէ այլք եկեղեցիք հայոց ըստ բաւականին ոչ ունեցան զտիրացուս և զժողովուրդս։ Զզգեստս և զշապիկս, զորս ունէին հայք՝ այնքան մեծածախք և ազնիւք էին, զորս գրով ծանուցանելն լսողաց անհաւատալի կարէր երևիլ։ Եւ ի մէջ այնց զգեստուց գոյին երկոտասան շապիկ, զորս յղեալ էր պատրիարգն՝ որոց իւրաքանչիւրն էր հինգ հարիւր զուռչի։ Ելեալք այնքանիւք բազմութեամբք ի լուսաւորչայ ժամուն եկին ի դուռն ճիզվիթաց ժամուն, և ընթերցեալ անդ զսուրբ աւետարանն, ուր ներկայ գտան ամենայն պատրիք հանդերձ զարդուք. և լինիւր հնչեցմունք թոափէթայից ըստ հրամանի հրեշտակին. և յետ որոյ անցեալք գնացին հայքն յեկեղեցին իւրեանց։ Եւ յետ այսորիկ լաթինքն ելեալք թափօրիւ գնացին ի դուռն լուսաւորչայ ժամուն և նոքա որպէս արարին հայքն՝ նոյնպէս ընթերցեալք զաւետարան գնացին ի ժամն իւրեանց . . . .։

. . . Ի կողմանէ պատերազմին ի մէջ մեծ պահուց լուաք ասա, զի ի պալատն արքունի տուայ և սէնէ եղեալ է վասն հաշտելոյ ընդ մուշտակին, և այս միջնորդութեամբ նեմցէ էլչուն։ Եւ պատճառ գլխաւորական տաճկաց ընդ մուշտակին հաշտեցութեան ասեն կամեցող զոլ սպիտակ լաթն այնու, զի ինքն զհաշտութիւն իւր ընդ նէմցէու ընդ թէութեան հաշտութեան տաճկաց ընդ մուշտակին եղեալ իցէ. այսինքն եթէ նեմցէն հաշտեցուցանիցէ զսոսա ընդ մուշտակին և ինքն ընդ նեմցէու հաշտեալ է. ապա թէ ոչ՝ ես ինքն չէ հաշտեալ ընդ նմա։ Բայց թէ տաճկունք և թէ մուշտակքն ամենայն պատրաստութեամբ ի տեղի պատերազմի գտանելոցք են, և հրեշտակքն, թէ նեմցէու, թէ ինկիլիզու

1. Շփոթութեան արդիւնք է այս. պէտք է ըլլար «եւ ուր ես եւ նա անդ»։